Ստեանց կարօտ որբացելուն,
Եւ թալկացեալ ի մօր սիրուն: 140

Արդ այսպէս վարժապետն իմ Տէր Սրապիոն եւ Գրիգոր կաթողիկոս Հայոց Թշուառական մահուամբ փոխեցաւ եւ զմեզ որբացեալ եւ կաթնակեր եթող: Ո՛վ աստուածասէր ժողովուրդք, ցուցէք ինձ. զմա՞յրն ամենեցուն լամք, թէ զտղան կաթնակեր: 145

Ա.

Աչք իմ լուսատու,
զիա՞րդ խաւարեցար.
Բազուկ իմ հզօր,
զիա՞րդ յարմնկէ հատար.
Գլուխ իմ զանգրահեր,
զիա՞րդ խոնարհեցար.
Դու համասփիւռ ծաղիկ,
զիա՞րդ թառամեցար.
Երկինք լուսատու, 5
զիա՞րդ ամպով ծածկեցար.
Զօրեղ զօրաւոր,
զիա՞րդ խոցեցար.
Է՛ չունչ իմ եւ հոգի,
զիա՞րդ քաղուեցար.
Ընտիր մարմնով սուրբ եւ կոյս,
զիա՞րդ ի հող լուծար.

139 ի ստեաց B: — 140 նորայ տեսուն B: — 144 կաթնակեր A: — 146 տղայն B կաթնակեր A:

Ա.

3 զանգրահեղ A: — 4 համասփուռ A: — 7 քաղեցար B: